«ԲԼԵՋԱՆ»
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ,ՍՈՑԻԱԼԱԿԱՆ,
ԲԻԶՆԵՍԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԿ

"BLEJAN"
ECOLOGICAL, SOCIAL, BUSINESS
SUPPORT NGO

ԲԼ–Գ–013 11.09.2020

ՀՀ շրջակա միջավայրի նախարար
Ռոմանոս Պետրոսյանին

Հարգելի պարոն Պետրոսյան

2019թ.-ի մարտի 28-ին ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից «ԲԼԵՋԱՆ» ՀԿ-ի 18.03.2019թ.-ի թիվ 003 գրությանը պատասխան է տրվել, որ մինչ 01.01.2019թ.-ը Սևան Ազգային պարկ ՊՈԱԿ-ի տարածքում կնքվել է 908 վարձակալության պայմանագիր:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե.

- ✓ Քանի վարձակալության նոր պայմանագիր է կնքվել մինչև 01.09.2020թ.-ը(նշել վարձակալների ցանկը):
- ✓ Քանի վարձակալության հին պայմանագիր է լուծարվել մինչև 01.09.2020թ.-ը(նշել վարձակալների ցանկը, տեղանքը և լուծարման պատճառները):
- ✓ 908 վարձակալներից քանիսի պայմանագրերն են ենթակա լուծարման(նշել վարձակալների ցանկը, տեղանքը և լուծարման պատճառները)
- ✓ 908 վարձակալներից քանիսն են թույլատրելի նիշից ներքև կառուցապատում իրականացրել, որոնք ենթակա են ապամոնտաժման(նշել վարձակալների ցանկը, տեղանքը)
- ✓ Մինչև 01.09.2020թ.-ը քանի շինություն է ապամոնտաժվել (նշել ցանկը, տեղանքը և յուրաքանչյուր կառույցի համար ում միջոցներով է կատարվել/ու/ ապամոնտաժումը)
- ✓ Թույլ տրվում է արդյոք (վարձակալված տարածքները միմյանցից բաժանելու նպատակով) Սևանա լիճը գոտևորող տարածքներում քարե պարիսպների կառուցումը (տրամադրել հիմքերը)

Խնդրում եմ նաև տրամադրել տեղեկատվություն Սևանա լճի ջրի բարձրացման հետևանքով ջրածածկված տարածքների մասին, այն է.

- ✓ Մինչև 01.09.2020թ.-ը ընդհանուր առմամբ ինչքան ջրածածկված ափամերձ տարածքներ կան (նշել թե լճի որ հատվածում ինչքան է ջրածածկվել)

Հասցե. ՀՀ, ք. Գավառ, Դաշտոյան 1-ին նրբանցք, տուն 16
Հեռ. (0264) 2-11-57, բջջ. (077) 76 46 41
Web: www.blejan.org

Address.RA, Gegharkunik marz, Gavar, Dashtoyan st.1/16
Tel.: +374 264 2 11 57, mob: +374 77 76 46 41
E-mail: info@blejan.org blejanli@gmail.com

- ✓ Ինչքան տարածք է մաքրվել մինչև 01.09.2020թ.-ը և ինչքան տարածք ունենք դեռ մաքրելու (նշել թե որ տարվանից է սկսվել մաքրումը, յուրաքանչյուր տարի լճի որ հատվածում ինչքան է մաքրվել, ինչ միջոցներով և աշխատանքներն իրականացնող կառույցը)
- ✓ Մինչև 1903,5մ նիշի ջրի բարձրանալը ինչքան տարածքներ դեռ կջրածածկվեն (նշել լճի որ հատվածներում է լինելու, յուրաքանչյուր տարածքում ինչքան):

Խնդրում եմ հնարավորության դեպքում տեղեկատվությունը տրամադրել թղթային կամ էլեկտրոնային տարբերակով: Թղթային տարբերակները ստանալու համար պատրաստ ենք վճարել, եթե էջերի թիվը գերազանցում է օրենքով պահանջվածը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալեմ:

Հարգանքով՝

ՀԿ նախագահ՝ Լիաննա Ասոյան

Հասցե. ՀՀ, ք. Գավառ, Դաշտոյան 1-ին նրբանցք, տուն 16
Հեռ. (0264) 2-11-57, բջջ. (077) 76 46 41
Web: www.blejan.org

Address.RA, Gegharkunik marz, Gavar, Dashtoyan st.1/16
Tel.: +374 264 2 11 57, mob: +374 77 76 46 41
E-mail: info@blejan.org blejanli@gmail.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

№ 5/07.4/10474

«18» «09» 2020թ.

«Բլեջան» բնապահպանական, սոցիալական,
բիզնեսի աջակցության ՀԿ-ի
նախագահ Լ.Ասոյանին

Հարգելի տիկին Ասոյան

Ի պատասխան Ձեր 2020թ. սեպտեմբերի 11-ի ԲԼ-Գ-013 գրության հայտնում եմ, որ համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի՝ Ձեր հարցադրմանը կպատասխանվի 30-օրյա ժամկետում, քանի որ գրությամբ բարձրացված հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք:

9/18/2020

X

ԳՐԻԳՈՐ ԳՈՒԼՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: GULYAN GRIGOR 3202780018 Գ. Գուլյան

ՀՀԿԲ
Տ. Սմբատյան
011-818-559

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
10010608@e-citizen.am | minenv@env.am | www.env.am
հեռ. +374 11 818520 | ֆաքս՝ +37411 818506

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

№ 5/07.4/10461
«16» «10» 2020 թ.

«Բլեջան» բնապահպանական, սոցիալական,
բիզնեսի աջակցության ՀԿ-ի
նախագահ Լ.Ասոյանին

Հարգելի տիկին Ասոյան

Ի պատասխան Ձեր 2020թ. սեպտեմբերի 11-ի ԲԼ-Գ-013 գրության հայտնում եմ, որ

- 2019թ. հունվարի 1-ից սկսած «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում կնքվել է 20 հողօգտագործման պայմանագիր (ցանկը կցվում է),
- մինչև 2020թ. սեպտեմբերի 1-ը լուծվել է 17 վարձակալության/կամ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր (ցանկը կցվում է),
- վարձավճարները չմուծելու պատճառով ներկա պահին լուծման պահանջով ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում գտնվում է 21 հայցադիմում,
- 2010թ.-ին կադաստրի կոմիտեի կողմից կատարված գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների ընթացքում հաշվառվել է 1905.0մ նիշից ցածր 4729 շենք-շինություն, որից շուրջ 850-ը նախորդ տարիների ընթացքում վարձակալների և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջոցներով ապամոնտաժվել է: Ներկայումս առկա է շուրջ 3800 շենք-շինություն, ինչը սակայն լրացուցիչ ճշգրտումների կարիք ունի: Այս պահին «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում ճշգրտումներ կատարելու նպատակով իրականացվում են շենք-շինությունների գույքագրման աշխատանքներ,
- ՀՀ կառավարության 2018թ. դեկտեմբերի 18-ի «Սևան» ազգային պարկի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման և քաղաքաշինական գործունեության իրականացման մասին» N 1563-Ն որոշման 11-րդ կետի 8-րդ ենթակետով արգելվում է լողափի գոտում բաժանիչ պարիսպների կամ ցանկապատերի տեղադրումը: Բուֆերային գոտում առանձին տարածքային հատվածներ կարող են սահմանազատվել ուղղահայաց կանաչապատման ցանկապատերի (մինչև 1.5 մետր բարձրությամբ) կամ բուսական պատնեշների տեղադրման միջոցով,
- 2001թ. դեկտեմբերի 14-ի «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքի ընդունման պահին, օրենքի 3.1 հոդվածի համաձայն, Սևանա լճի մակերեսը կազմել է 124000 հա: 2017թ. ԱԻՆ «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակված հաշվետվության համաձայն Սևանա լճի մակերեսը 1900.5 մ բացարձակ նիշի դեպքում կազմել է 127860 հա: Հաշվի առնելով, որ Սևանա լճի մակարդակը 2017թ. համեմատ նույնն է մնացել, հետևաբար լճի բարձրացման հետևանքով ջրածածկվել է շուրջ 3860 հա: Ջրածածկված ափամերձ հատված առ հատված տարածքների վերաբերյալ տեղեկատվության համար կարող եք դիմել կադաստրի պետական կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
10010608@e-citizen.am | minenv@env.am | www.env.am
հեռ. +374 11 818 520 | ֆաքս՝ +374 11 818 506

- Համաձայն 2001թ. դեկտեմբերի 14-ի «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքի՝ նախատեսված է եղել ջրածածկման ենթակա 5000.0 հա անտառածածկ մաքրման տարածք, որից մինչև օրս մաքրվել է 2200 հա: 2200 հա-ից 324 հա-ը մաքրվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և ֆիզիկական/կամ իրավաբանական անձանց միջև կնքված ջրածածկման ենթակա անտառների մաքրման պայմանագրերով, իսկ 1876 հա-ը՝ պետական բյուջեի միջոցներով:
- Մինչև 1903.5 մ ջրի բարձրանալու դեպքում որքան տարածքներ դեռ կջրածածկվեն՝ շրջակա միջավայրի նախարարությունը տեղեկություն չունի, կարող եք դիմել կադաստրի պետական կոմիտե:

Առաջին անգամ ժամանակակից մեթոդներով իրականացվել է մինչև 1901,5 մ ծովի մակերևույթից բարձր առափնյա տարածքների մանրամասն ուսումնասիրություն և գնահատում, այդ թվում ընտրված տեղամասերի համար հանույթ անօդաչու թռչող սարքով (արդյունքը՝ 10սմ/պ լուծաչափով օրթոֆոտոպատկեր): Վեգետացիոն ցուցիչների հաշվարկի և վերլուծության արդյունքում վեր են հանվել առաջնային մաքրման ենթակա ջրածածկ և ճահճապատ տարածքները: Հայտարարված մրցույթում հաղթող է ճանաչվել «Հարությունյան ՇԻՆ» ՍՊԸ-ն:

Շրջակա միջավայրի նախարարության և «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի միջև 2019թ. սեպտեմբերի 2-ին 2019-2021թթ. ընկած ժամանակահատվածում իրականացման համար կնքված պայմանագրով, Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների կատարման փոփոխված պայմանագրի ծավալաթերթով մինչև 2020թ. հունվար ամսվա վերջ մաքրման ենթակա էր 98 հա տարածք: Փաստացի մաքրվել է 98 հա ցամաքային և ճահճապատ տարածք, դուրս է բերվել ավելի քան 16220 խմ (խտացված) վերգետնյա կենսազանգված և արմատային զանգված (տիղմի և հողախառնուրդի հետ միասին): Ներկայումս, համաձայն պայմանագրի՝ 2020 թվականի համար նախատեսված է մաքրել 271 հա: Փաստացի մաքրվել է 69 հա ցամաքային և ճահճապատ տարածք: Կից ներկայացվում է մինչև 1901,5 մ ծովի մակերևույթից բարձր առափնյա տարածքների 2020 և 2021 թվականների Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը:

Առդիր՝ 3 նիշք:

10/16/2020

X

ԳՐԻԳՈՐ ԳՈՒԼՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: GULYAN GRIGOR 3202780018

Գ. Գուլյան

ՀՀԿԲ

01.01.2019-ից մինչև 01.09.2020թ կնքված պայմանագրերի ցանկ

N/N	Պայմանգրի համարը	Պայմանագիր կնքած անձանց և ՍՊԸ-ների անունները,	Հողամասի մակերեսը (հա)	Պայմանագրի ժամկետը
1	1569	«Սևանի ծիծեռնակ» ՍՊԸ	9,7117	16.10.2043
2	1571	«Կապուտակ» ՓԲԸ	1,798	13.09.2043
3	1573-731	Կարինե Ղարիբյան	1,2	25.04.2032
4	1574	«Արմդայվինգ» ՀԿ	1,0	19.06.2044
5	1575	«Կոմանդոր» ՍՊԸ	3,0	19.06.2044
6	1576	«Քրիստալ Լեյք Հոլդինգ» ՍՊԸ	0,2644	19.06.2044
7	1578	Խոսրով Հարությունյան	0,05	14.08.2022
8	1579	«Ռենեսանս Փրոֆիթ» ՍՊԸ	5,4925	20.08.2044
9	1577	«Ձյունիկ սառնարան» ՍՊԸ	0,0319	15.07.2022
10	1580	Սամվել Ծահինյան	0,6517	28.10.2022
11	1581	Աշոտ Ավետիսյան	0,2509	29.10.2022
12	1582	Արթուր Մանուկյան	0,0637	30.10.2022
13	158/5	«Ախթամար» ՓԲԸ	2'0	23.01.2045
14	1586	Գագիկ Մարգարյան	0,0451	30.01.2023
15	1583	«Բարի մամա» ՀԿ	1,0	20.01.2045
16	1587-ՍՔ 047	Վիգեն Քոչարյան	0,0385	27.02.2045
17	1588	Պարույր Երզնկյան	0,0374	25.02.2023
18	1589	Սամվել Մկրտչյան	0,1505	06.03.2023
19	1590	«Ճան-Շին» ՍՊԸ	4,5491	06.04.2045
20	1592-1065	«Ռանչպար» ՍՊԸ	19'6646	30.06.2023

ՑԱՆԿ

2020 թվականի ընթացքում

Հ/Հ	Պայմանագրի կողմը	Պայմանագրի համարը	Պայմանագրի կնքման ամսաթիվը	Պայմանագրի վերջնաժամկետը	Հողամասի մակերեսը (հա)	Տարեկան վարձավճարի չափը	Հողամասի գտնվելու վայրը	Դադարեցման եղանակը	տեղեկանքի տրման ամսաթիվը
1	Կնյազյան Մեսրոպ	980	07.12.2007	07.12.2032	0,2000	82 000,00	Սևան	Համատեղ դիմում	29.01.2020
2	Հայկական ավիաուղիներ ՓԲԸ	1478	29.08.2012	29.08.2037	5,9040	732 096,00	Սևան	Դատարանի վճիռ	14.02.2020
3	Հովիկ - 95 ՍՊԸ	789	11.06.2007	11.06.2032	3	360000	Լճափ	Դատարանի վճիռ	
4	„ ԱՆԴԷ ՊԱՐՏՆԵՐՍ" ՍՊԸ	790	11.06.2007	11.06.2032	1,0000	120 000,00	Լճափ	Համատեղ դիմում	30.06.2020
5	Հայկոպ վարչություն	795	11.06.2007	11.06.2032	5,0000	350 000,00	Վարդենիս	Համատեղ դիմում	13.07.2020
6	Պատրիկ Աճեմյան	978	07.12.2007	07.12.2032	1,2500	175 000,00	Աղբերք	Համատեղ դիմում	28.07.2020
7	Սարգիս Կարապետյան	979	07.12.2007	07.12.2032	1,2500	175 000,00	Աղբերք	Համատեղ դիմում	28.07.2020
8	Մակար Ղամբարյան	899	12.10.2007	12.10.2032	0,1000	14 000,00	Դրախտիկ	Համատեղ դիմում	27.07.2020

ՑԱՆԿ

2019 թվականի ընթացքում

դադարեցված պայմանագրերի

Հ/Հ	Պայմանագրի կողմը	Պայմանագրի համարը	Պայմանագրի կնքման ամսաթիվը	Պայմանագրի վերջնաժամկետը	Հողամասի մակերեսը (հա)	Տարեկան վարձավճարի չափը	Հողամասի գտնվելու վայրը	Դադարեցման եղանակը	տեղեկանքի տրման ամսաթիվը
1	Կնյազյան Սուսաննա	1025	18.01.08	18.01.2033	0,4	56000	Արտանիշ	Համատեղ դիմում	31.01.2019
2	Պողոսյան Վարդան	917	19.10.07	19.10.2032	2	260000	Աստղաձոր	Համատեղ դիմում	03.05.2019
3	Մամիկոնյան Վարդան	1146	02.04.08	02.04.2033	1	120000	Ծովազարդ	Դատարանի վճիռ	20.06.2019
4	Սիմոնյան Հայրապետ	146	20.08.2004	20.08.2007	0,3	195000	Սևան	Համատեղ դիմում	29.10.2019
5	<<Միքայելյան եղբայրներ>> ՍՊԸ	157	27.08.2004	27.08.2103	4	60000	Վարդենիկ	Համատեղ դիմում	26.09.2019
6	Մարգարյան Լիանա	673	16.02.2007	16.02.2032	0,5	50000	Ծափաթաղ	Դատարանի վճիռ	06.05.2020
7	Աջակցություն հանդբոլին հիմնադրամ	1473	08.08.2011	22.02.2036	0,74	115440	Ներքին Գետաշեն	Համատեղ դիմում	19.11.2019
8	<<ԱԿՆԱՏՈՒՆ>> ՍՊԸ	221	19.10.04	19.10.2029	1	100000	Շորժա	Համատեղ դիմում	16.07.2019/ 14.06.2019
9	Բաբակեխյան Արթուր	864	28.09.2007	28.08.2032	5	500000	Ծովագյուղ	Համատեղ դիմում	29.08.2019

Տեղեկատվություն

2020 և 2021 թվականների Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների վերաբերյալ

Մասնաճյուղ	Տեղամաս	Ծառաթփային բուսականություն	Ճահճապատ տարածքներ	Ջրածածկ տարածքներ	ԸՆԴԱՄԵՆԸ
		հա	հա	հա	հա
Մարտունի		*6.30*	*26.00*	*7.30*	*39.60*
	Մարտունի	*6.30*	*26.00*	*7.30*	*39.60*
Վարդենիկ		*8.00*	*58.00*	*3.00*	*69.00*
	Վարդենիկ		*35.00*	*2.00*	*37.00*
	Ծովինար	*8.00*	*23.00*	*1.00*	*32.00*
Վարդենիս		*22.00*	*107.00*	*30.00*	*159.00*
	Ծովակ 2	*3.00*	*27.00*		*30.00*
	Վարդենիս	*19.00*	*80.00*	*30.00*	*129.00*
Ընդամենը		*36.30*	*191.00*	*40.30*	*267.60*
Արևիկ		*3*	*21*	*2*	*26.00*
	Փամբակ		*4*		*4.00*
	Արեգունի	*3*	*17*	*2*	*22.00*
Արտանիշ		*6*	*34*	*2*	*42.00*
	Արտանիշ		*17*	*1*	*18.00*
	Դրախտիկ 1		*10*	*0.5*	*10.50*
	Դրախտիկ 2	*6*	*7*	*0.5*	*13.50*
Մարտունի		*0*	*84*	*5*	*89.00*
	Երանոս		*84*	*5*	*89.00*
Նորատուս		*22.8*	*149*	*26*	*197.80*
	Հայրիվանք		*57*	*25*	*82.00*
	Նորատուս	*22.8*	*92*	*1*	*115.80*
Սևան		*13*	*44*	*44*	*25.00*
	Սևան *	*13*	*39*	*37*	*13.00*
	Ախթամար		*5*	*7*	*12.00*
Ընդամենը		*44.8*	*332*	*79*	*379.80*
ԸՆԴԱՄԵՆԸ		**81.10**	**523.00**	**119.30**	**647.40**

*Խոտածածկ տարածքների 74.7 հա-ի և Սևան տեղամասի ճահճապատ և ջրածածկ 76 հատարածքի (Նորաշեն արգելոց) Համար ֆինանսական հաշվարկ չի իրականացվել: մաքրման ենթակա ընդհանուր տարածքը կազմել է 647.4հա: